Հավելված N 3
ՀՀ կառավարության 2012 թ.
մարտի 7-ի նիստի N 9
արձանագրային որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարող և համակատարողները | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացում | ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների իրավական կարգավիճակի և դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և գործունեության դադարեցման կարգի սահմանմամբ պայմանավորված առանձնահատկությունների նախատեսում: | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2012թ. ընթացքում | Չի պահանջվում |
| 2. | <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացում | ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների իրավական կարգավիճակի և դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման ու գործունեության դադարեցման կարգի սահմանմամբ պայմանավորված առանձնահատկությունների նախատեսում: | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2012թ. ընթացքում | Չի պահանջվում |
| 3. | ՀՀ ՊՆ համակարգում սպայական կադրերի որակավորման | Սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնի | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2013թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջեով ՀՀ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բարձրացման կենտրոնի ստեղծում | նպատակն է լինելու բարձրացնել ՀՀ ԶՈՒ սպաների որակավորումը: | | | պաշտպանության նախա-րարությանը հատկացված միջոցների հաշվին |
| 4. | ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի վերա-կազմակերպում | ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի վերա-կազմակերպմամբ կապահովվի ՀՀ ԶՈՒ կրտսեր սպայական և հրա-մանատարական կազմի մարտա-վարական մակարդակի ռազմական կրթությունը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը, որն իրականացվելու է բուհական 1-ին ու 2-րդ աստիճանի և լրացուցիչ կրթության ձևերով: | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2013թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջեով ՀՀ պաշտպանության նախա-րարությանը հատկացված միջոցների հաշվին |
| 5. | ՀՀ ՊՆ Մարշալ Ա. Խանփե-րյանցի անվան ռազմական ավիացիան ինստիտուտի վերա-կազմակերպում | ՀՀ ՊՆ Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիան ինստիտուտի վերակազմակերպ-մամբ կապահովվի ՀՀ ԶՈՒ կրտսեր սպայական և հրամանատարական կազմի մարտավարական մակար-դակի ռազմական կրթությունը, վերապատրաստումն ու որակա-վորման բարձրացումը, որն իրա-կանացվելու է բուհական 1-ին ու 2-րդ աստիճանի և լրացուցիչ կրթու-թյան ձևերով: | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2013թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջեով ՀՀ պաշտպանության նախա-րարությանը հատկացված միջոցների հաշվին |
| 6. | ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի ան-վան ռազմամարզական վարժա- | ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի վե- | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2013թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջեով ՀՀ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | րանի վերակազմակերպում | րակազմակերպման արդյունքում ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների համար որակյալ կադրերի /կուրսանտների/ պատրաստում | | | պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին |
| 7. | ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի վերակազմակերպում | ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի հենքի վրա ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային համալսարանի ստեղծում: Համալսարանի ստեղծմամբ կապահովվի ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական և հրամանատարական կազմի, ինչպես նաև ՀՀ պաշտպանական-անվտանգային խնդիրների լուծման մեջ ներգրավված ՀՀ այլ գերատեսչությունների ավագ և բարձրաստիճան պաշտոնյաների ռազմավարական մակարդակի պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական կրթությունը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը, որն իրականացվելու է բուհական 2-րդ աստիճանի, հետբուհական և լրացուցիչ կրթության ձևերով: | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2013թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջեով ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին |
| 8. | ՀՀ ՊՆ ենթասպաների դպրոցի վերակազմակերպում | Օրենքով սահմանված կարգով մասնագիտական ուսուցման ապա- | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2013թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջեով ՀՀ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հովում, որով համապատասխան կազմում ընդգրկված զինծառա-յողներին կտրվեն մասնագիտական գործունեության համար անհրա-ժեշտ գիտելիքներ և հմտություններ: | | | պաշտպանության նախա-րարությանը հատկացված միջոցների հաշվին |
| 9. | ՀՀ ՊՆ հրամանատարաշտաբա-յին ռազմական ակադեմիայի ստեղծում | Սպայական կադրերի որակավոր-ման բարձրացման կենտրոնի հենքի վրա ՀՀ ՊՆ հրամանա-տարաշտաբային ռազմական ակա-դեմիայի ստեղծմամբ կապահովվի ՀՀ ԶՈՒ ավագ սպայական և հրամանատարական կազմի մար-տավարական-օպերատիվ մակար-դակի ռազմական կրթությունը, վերապատրաստումն ու որակավոր-ման բարձրացումը, որն իրա-կանացվելու է բուհական 2-րդ աստիճանի, հետբուհական և լրացուցիչ կրթության ձևերով: | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2014թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջեով ՀՀ պաշտպանության նախա-րարությանը հատկացված միջոցների հաշվին |